

Երկիր մոլորակի բոլոր կենդանի էակների պաշտպանության դեկլարացիա

Ներածություն

Երկրագունդը զարգացող կենդանի էություն է: Երկրի վրա կյանքի յուրաքանչյուր դրսևորում այդ կենդանի էության կարևոր մասն է կազմում: Համապատասխանաբար, մենք, որպես մարդկային ցեղի առանձին ներկայացուցիչներ, պետք է զարգացնենք այն գիտակցությունը, որ մենք բոլորս կյանքի համաշխարհային հանրության անդամներն ենք, և որ մենք մասնակից ենք ընդհանուր առաքելությանը և կիսում ենք պատասխանատվությունը մեր մոլորակի ապագայի համար:

Մեզնից յուրաքանչյուրն իր դերն ունի մեր մոլորակի զարգացման գործում, և երկրագնդի վրա խաղաղության հաստատման համար յուրաքանչյուր անհատ պետք է գործի համաձայն իր պատասխանատվության ու պարտականության: Մինչ օրս երկրագնդի վրա քչերն են լիովին բավարարվել կյանքով: Մենք ակնատես ենք բնական հարստությունների և հողի համար ողջ աշխարհում տեղի ունեցող ընդհարումների: Դրանք ավերիչ ազդեցություն են գործում համընդհանուր միջավայրի վրա:

Նոր հազարամյակի շեմին աշխարհում խաղաղության հաստատումը ամենից առավել պայմանավորված է մարդկային ցեղի յուրաքանչյուր ներկայացուցչի գիտակցության արթնացմամբ: Այսօր անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր անհատ խաղաղություն և ներդաշնակություն հաստատելու պատասխանատվությունը կրի իր հոգում: Այս ընդհանուր առաքելությունը վերաբերում է բոլորիս, և մենք պարտավոր ենք այն իրականացնել:

Աշխարհում խաղաղություն կհաստատվի այն ժամանակ, երբ մարդկային համայնքի յուրաքանչյուր անդամ քաջատեղյակ լինի այդ ընդհանուր առաքելության մասին - երբ բոլորս կհամախմբվենք հանուն մեր ընդհանուր նպատակի:

Մինչև այժմ իշխանության, ունեցվածքի, համբավի, գիտելիքների, տեխնոլոգիաների և կրթության տեսակետից մարդկությունը բաժանվել է այդ ամենին տիրապետող և դրանցից զուրկ անհատների, ազգերի և կազմակերպությունների: Տարբերություն է դրվում նաև տվողների և ստացողների, օգնություն տրամադրողների և ընդունողների միջև:

Մույնով մենք հայտարարում ենք մեր պատրաստակամությունը փոխարինել այս բոլոր հակասականությունները և տարբերությունները բոլորովին նոր գաղափարով, ինչը մեզ համար հիմք կծառայի խաղաղ աշխարհի կառուցելու համար:

Հիմնական սկզբունքներ

Նոր դարաշրջանում մարդկությունը պետք է ընթանա դեպի ներդաշնակության աշխարհ, այսինքն աշխարհ, որտեղ յուրաքանչյուր անհատ ու ազգություն կարող է ազատորեն դրսևորել իր առանձնահատուկ բարենասնությունները՝ միաժամանակ համերաշխ ապրելով միմյանց և ողջ կենդանական աշխարհի հետ: Այդ ձգտումներն իրականացնելու համար մենք ներկայացնում ենք հետևյալ առաջնորդող սկզբունքները:

1. Կյանքի մեծարանք

Մենք պետք է ստեղծենք աշխարհ՝ հիմնված սիրո և ներդաշնակության վրա, որտեղ կյանքի բոլոր դրսևորումները հարգանքի են արժանանում:

2. Հարգալից վերաբերմունք բոլոր բազմազանությունների նկատմամբ

Մենք պետք է ստեղծենք աշխարհ, որում տարբեր ցեղեր, էթնիկական խմբեր, կրոններ, ավանդություններ ու սովորություններ հարգանքի են արժանանում: Աշխարհը պետք է դառնա մի վայր, որը զերծ է սոցիալական, ֆիզիկական կամ հոգևոր խտրականությունից կամ հակամարտությունից՝ վայր, որտեղ բազմազանությունը գնահատվում ու ողջունելի է:

3. Երախտապարտություն ողջ բնությանը և գոյակցություն նրա հետ

Մենք պետք է ստեղծենք աշխարհ, ուր յուրաքանչյուր անձ գիտակցում է, որ մեզ հնարավորություն է տրվել ապրել բնության օրինանքով, և ներդաշնակ կյանք է վարում բնության հետ՝ արտահայտելով իր երախտագիտությունը ամբողջ կենդանական ու բուսական աշխարհի և կյանքի այլ դրսևորումների նկատմամբ:

4. Ներդաշնակություն հոգևորի և նյութականի միջև

Մենք պետք է ստեղծենք աշխարհ՝ հիմնված նյութական և հոգևոր քաղաքակրթության ներդաշնակ հավասարակշռության վրա: Մենք պետք է հեռանանք նյութականի չափազանց շեշտադրումից՝ հնարավորություն տալով հոգևորի բարերար ազդեցության տարածմանը համայն մարդկության մեջ: Մենք պետք է ստեղծենք աշխարհ, որտեղ արժևորվում են ոչ միայն նյութական բարիքների առատությունը, այլ նաև հոգևոր հարստությունները:

ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Մենք պետք է իրագործենք այս սկզբունքները՝ առաջնորդվելով հետևյալով.

Որպես անհատներ՝

Մենք պետք է անցնենք մի դարաշրջանից, որտեղ իշխանությունն ու պատասխանատվությունը գտնվում են ազգային պետությունների, էթնիկական խմբերի ու կրոնների ձեռքին, դեպի մեկ այլ դարաշրջան, որտեղ անհատն է գերիշխում: «Անհատի Դար» ասելով մենք հասկանում ենք ոչ թե անձնապաշտության դար, այլ մի ժամանակաշրջան, որտեղ յուրաքանչյուր անհատ, որպես մարդկային ցեղի անկախ անդամ, պատրաստ է իր վրա վերցնել առաքելության պատասխանատվությունն ու իրագործումը:

Մեզնից յուրաքանչյուրը պետք է իրականացնի մեր սեփական սրտերում սեր, ներդաշնակություն և երախտագիտություն սերմանելու մեր կարևորագույն առաքելությունը, և դրանով իսկ ներդաշնակություն հաստատի ողջ աշխարհում:

Յուրաքանչյուրն իր ասպարեզում՝

Մենք պետք է կառուցենք համագործակցության մի համակարգ, որտեղ կկենտրոնացվի իմացությունը՝ առավելագույնը ստանալու համար տեխնիկական գիտելիքներից, ունակություններից ու կարողություններից, որոնք ձեռք են բերվել տարբեր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, գիտությունը, մշակույթը և արվեստները, ինչպես նաև կրոնը, փիլիսոփայությունը, քաղաքականությունը և տնտեսագիտությունը:

Որպես երիտասարդ սերունդ՝

20-րդ դարում ծնողները, ուսուցիչները և հասարակությունն էր երեխաներին կրթողն ու դաստիարակողը, և երեխաները մշտապես ուսուցանվողների իրավիճակում էին: 21-րդ դարում, միմյանց ոգեշնչելու և խանդավառելու համար, մեծահասակներն են սովորելու երեխաներից՝ առաջնորդվելով նրանց զարմանալի ունակություններով, ինչպիսիք են հոգու մաքրությունը, անմեղությունը, պայծառությունը և ներըմբռնողությունը: Պայծառ ապագայի համար խաղաղ կյանք ստեղծելու գործում գլխավոր դերակատարը մատաղ սերունդն է լինելու:

Խաղաղություն՝ն ամբողջ աշխարհի մարդկությանը